

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մշտահոլով ժամանակի մեջ մարդկությունը, կանոնակարգելով իր կյանքը, կազմում է մի ուղեցույց, ուր հստակ գրված են բոլոր օրերի անվանումները: Կյանքն իր բոլոր դրսևորումներով հանդերձ ներկայանում է իբրև չափագրված մի ընթացք, որ կազմակերպում է մարդու հոգևոր և ֆիզիկական կյանքի բոլոր ձևերը: Մեզանից յուրաքանչյուրն իր կյանքում կարող է ունենալ երկու օրացույց այսօրվա պայմաններում. մեկը՝ քաղաքացիական, մյուսը՝ եկեղեցական: Եթե բացելիս լինենք քաղաքացիական օրացույցը, այսօրը այնտեղ նշված է որպես մի պարզ օր, սակայն եթե բացենք մենք եկեղեցական օրացույցը և կարդանք, գրված է. «Բուն Բարեկենդան. սկիզբը մեծի պահոց քառասնօրյա շրջանի»: Ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, որ Հայոց Եկեղեցին իր ծիսական համակարգում հատուկ նշանակություն է տալիս այս օրվան և բացառիկ նշանակություն այն քառասուն օրերին, որ հաջորդելու են մեկը մյուսին: Մեր կյանքում ամեն օր թե՛ ռադիոյով, թե՛ թերթերով լսում ենք հազարավոր հայտարարություններ, թե բազմաթիվ տուրիստական կազմակերպություններ մեզ հրավիրում են ուղևորության տարբեր-տարբեր քաղաքներ ու երկրներ և հստակ նշում իրենց ուղեցույցը բազմաթիվ հանգրվաններով: Մեկն ունի առաջին հանգրվան ինչ-որ քաղաքի մեջ, երկրորդ, երրորդ և բազմաթիվ հանգրվաններ տարբեր երկրներում, բազմաթիվ քաղաքներում: Այսօր Հայաստանյայց Եկեղեցին, սիրելի հավատացյալներ, բացառիկ և յուրահատուկ մի հոգևոր ուղևորության է հրավիրում ձեզ առանց վարձի, առանց փոխադրության միջոցների, առանց հյուրանոցների և կերակուրների: Անդամագրվեք այս հոգևոր ուղևորությանը և քառասուն օրերի հետ միասին դուք ականատես կլինեք Աստվածաշնչյան բազմաթիվ թեմաների, որոնք միասին կգնահատվեն մարդու հոգեվիճակի, մարդու էության տարբեր դրսևորումների: Ես այսօր հակիրճ խոսքով միայն տալու եմ այդ հոգևոր ուղևորության վեց հանգրվանները, որ մեր ծիսակարգում նշված են վեց անվանումներով: **Առաջին հանգրվանը այսօրն է՝ Բուն Բարեկենդանը,** այսինքն բարի կենդանության, զվարթության, մարդկության ամենակարևոր դրսևորումը, որ մեր Եկեղեցին Աստվածաշնչի պատումով նկարագրում է արարչագործությունից հետո, մարդու ստեղծման պատումից հետո առաջին նախաստեղծների գոյավիճակը դրախտային փափկության մեջ: Կյանքի մատյանը նշում է, որ առաջին նախաստեղծները ապրում էին մի տարածքում, շատ ճոխ պայմաններում, Աստուծո հովանու ներքո, մարդ-Աստ-

ված հարաբերության գեղեցիկ ներդաշնակությամբ: Արարածը ճանաչում է Արարչին, Արարիչն էլ հոգում է Իր արարածին: Սակայն պատահում է այնպես, որ խզվում է ներդաշնակության կապը, մեծամտանում է արարածը և իրեն փորձում է զգալ որպես Արարիչ, հավասարը հավասարին: Աստվածուրացումը մարդուն դնում է դժվարին կացության մեջ: Մարդը վտարվում է դրախտային պայմաններից: Կտրվում է կապը Արարչի և արարվածի միջև:

Մեր Եկեղեցին **երկրորդ հանգրվանը նշում է որպես Արտաքսման կիրակի:** Աստված մարդուն արտաքսում է դրախտից և թողնում է նրան ինքնիշխան, որպեսզի նա ապրի այնպես, ինչպես ինքը կամենա:

Երրորդ հանգրվանը մեր ծիսակարգում նշված է որպես **Անառակի կիրակի:** Զղջման, ապաշխարության և վերադարձի կիրակի: Մարդը մի պահ իր մենության մեջ ուներնում է հոգեփոխում, զգում է կատարված սխալը և կրկին վերադառնում է առ Աստված և ասում. «Մեղանչեցի, հայր, քո առջև, ուստի խնդրում եմ քո թողությունը»:

Հոգևոր ուղևորության **չորրորդ հանգրվանը կոչվում է Տնտեսի կիրակի:** Ավետարանի գեղեցկահյուս մեկ պատում Քրիստոսի հրահանգիչ խոսքերով Իր աշակերտներին ուղղված խավարի և լույսի հոգեմարտության մեջ լուսո որդիների կարևորությունն է ի հայտ գալիս, և իրավամբ խոսքերը դառնում են մարդկության համար որպես ուղեցույց:

Հինգերորդ հանգրվանը կոչվում է Անիրավ դատավորի հանգրվան: Հարատև աղոթքով մարդը կարող է հասնել ամենայն բարիքների:

Վերջապես, **վեցերորդ հանգվանը կոչվում է Գալստյան կիրակի:** Մենք՝ բոլոր քրիստոնյաներս ապրում ենք ժամանակավոր մի հատված Քրիստոսի երկրորդ գալստյան ակնկալիքով: Եկեղեցին ստանձնել է ժամանակավոր դեր մինչև Քրիստոսի գալուստը, որպեսզի Իր գալստյամբ հոգեփոխվի ողջ մարդկությունը, և առաջ է գալու նոր երկինք և նոր երկիր: Հիմնակետ ունենալով Քրիստոսի հարության կարևորությունը՝ Եկեղեցին քառասնօրյա իր հոգևոր ուղևորությամբ պատրաստելու է իր հավատացյալներին, որպեսզի մաքրության պայմաններում դիմավորեն Փրկչի հրաշափառ Հարությունը: Այս հոգևոր ուղևորությանը, սիրելի հավատացյալներ, մասնակից եղեք և մեր հոգևոր հայրերը ամեն կանգառում, ամեն հանգրվանում վեր կհանեն մարդու հոգևոր կեցության դրսևորումը տվյալ պարագայում:

Մեծի պահոց շրջան. կարծեք թե տիեզերական պատմության ողջ խտացումն արտահայտող այս շրջանը մարդկային կյանքի ամենակարևոր դրսևորումն է: Բացեք Ավետարանը և առաջին իսկ էջում հրահանգիչ խոսքը կա՝ ապաշխարեցեք: Փակեք Ավետարանը և դուք վերջին նախադասությունում կկարդաք. «Ամեն, եկ Տէր Հիսուս Քրիստոս»: Սկիզբ և վախճան: Ապաշխարությամբ և զղջումով ընթացող մարդը ակնկալությունը ունի Փրկչին դեմ-հանդիման տեսնելու և ստանալու Նրա բարեգթությունը: Սակայն այդ ունենալու համար մարդը պետք է անցնի իր զղջման, մաքրության բավիղներով, որպեսզի վարձքն ստանա գթառատ Տիրոջ: Մարդ-Աստված հարաբերության մեջ Աստված տալիս է մարդուն բոլոր կերպերը՝ դառնալու դեպի ճշմարտություն: Մեր այս հոգևոր ուղևորությունը ձգվելու է խավարից դեպի լույս, մահից դեպի կյանք: Անդամագրվեցեք, սիրելի հավատացյալներ, այս ուղևորությանը, և դրա բարիքները դուք կստանաք քառասուն օրեր հետո: Բարի ընթացք ձեզ, սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր: